

նաւթ. ընկ.» աշդուլութիւնը առաջ բերաւ «Րիշտան» անունով մի ընկերութիւն, որի անուանական 100 բուլլիանոց պայերը այժմ Կովկանդի շուկայում 400 բուլլով են վաճառում, ի հարկէ անհիմն ածիօտաժի շնորհիւ, որից այնքան միամիտներ տուածեցին մի ժամանակ «բախտաւոր» Բագուում:

S.

ԻՐԱՆԵԱՆ ԹՈՒՐԷՐ

կամ

ԱԶԸՐԲԷՅԶԱՆՆԵՐ¹⁾

1. Որտեղից են եկած Անդրկովկասի թուրքերը

Իրանեան թուրքերի ասելով հասկանում ենք մենք բառի լայն իմաստով թուրք ժողովրդի այն հատուածը, որ ապրում է այժմ հին Իրանի հողի վրայ. այդտեղ է հաշուած և Անդրկովկասը մինչև Դերբենդ:

Եթէ ոչ անկարելի, դո՛ւնէ շատ դժուար է որոշելը, թէ երբ է սկսել այս օտար տարրը Իրանում ազդեցութիւն ձեռք բերել: Հիւսիսային Իրանը, այսինքն խորասանը, Կասպից Ծովի հարաւային ափերը և Անդրկովկասը պէտք է որ դեռ անյիշելի ժամանակներից ենթարկուած լինէին հատ-հատ թուրք ցեղերի ու հրոսակների յարձակմանը, որոնք իբրև կռիւ ու աւար սիրող թափառականներ ընկնում էին մերկ տափաստաններից դրացի քաղաքակիրթ երկրների վրայ՝ այնտեղի իրանական նստակեաց ժողովուրդների աշխատանքի արդիւնքովը իրանց ողորմելի ապրուստը քիչ մեղմելու:

Պարթևների դեռ չպարզուած ազդեցորական կապերից այստեղ եզրակացութիւններ հանել չենք ուզում, բայց և այնպէս

¹⁾ Das Türkenvolk

չենք կարող չենթադրել, թէ հարեան թուրք ժողովուրդներին մի քանի հատուածները, գլխաւորապէս Հիւրկանեան տափաւրակից ու ստորին Ուզայի ցածոյթներէց, դեռ հնազոյն դարերում մուտք են գործել Իրան ու կանգ են առել մի առժամանակ գէթ նրա սահմանի մասերում:

Այս ենթադրութեան ի նպաստ են խօսում ամենից առաջ հին իրանական առասպելներում խտացած սարսափը հիւսիսից խուժող բարբարոսների դէմ. այլև ընդհանրապէս Իրանի հերոսական շրջանի ամբողջ առասպելափունջը, ուր հերոսական ոգին, իրանեցու հոգեկան ու մարմնական ուժերը փորձի են հանուում իրանց ժառանգական թշնամի թուրանցիների դէմ և ստանում անմահութեան դափնին: Սրան ապացոյց է նոյնպէս թուրքերէնի արած ազդեցութիւնը Պարսից լեզուի վրայ: Կան նաև պատմական ցուցումներ, իհարկէ աղօտ կայծեր միայն, որոնք սակայն օգնում են մեզ այդ խաւարը քիչ-միչ փարատելու:

Մենք չենք ուզում այստեղ ըննութեան ենթարկենք, թէ արդեօք իսկապէս արժանի է նոր բանասէրների ցոյց տուած վստահութեանը այն տեղեկութիւնը, որ հայ պատմագիր Կադանկատուացին տալիս է Քրիստոսից 450 տարի առաջ Աղուանքի վրայ տեղի ունեցած խաղաղների արշաւանքի մասին. «չ էլ ընենել ենք ուզում, թէ արդեօք կարելի է նոյնացնել Ուզայի խաղաղների հետ Մովսէս Սորենացու յիշած խոզիւնները, որոնք Քրիստոսից յետոյ 193—213 թուերին աւեր ու քանդ են սփռել Դերբենդի վրայ: Բայց անվիճելի փաստ է արդէն, և պէտք է ազգագրական ու աշխարհագրական պայմանների արդիւնք նկատուի այն արշաւանքը, որ Սկիւթ հաւաքական անուան տակ յայտնի եղող ու Կովկասեան լեռներից հիւսիս ապրող թափառականները կատարել են դէպի Կովկաս ու այնտեղից էլ Իրան անշուշտ Քրիստոսի ծննդից առաջ: Այսպէս մենք իմանում ենք Պրիսգուսից, որ Հունների թագաւոր Ատաթիլան մտադիր էր մի արշաւանք ձեռնարկելու դէպի Պարսկաստան: Սրանից վստահօրէն կարելի է եզրակացնել, որ թուրքերը արդէն նախապէս ծանօթ էին Կովկասի ու հիւսիս-արեւմտեան Իրանի քաղաքակրթութեան կենտրոններին:

Անդրկովկասում ու Աղբրէյշանում թուրք տարրերի ունեցած ազդեցութեան աւելի որոշ պատկերը տալիս է մեզ պատմութիւնը Իսլամի երեւալուց յետոյ: Այսպէս Դերբենդնամէից տեղեկանում ենք, որ ամբողջ ութերորդ դարու ընթացքում թուրք ժողովուրդը խաղաղները գրեթէ շարունակ կուռի մէջ էին խալիֆների զանազան բանակների հետ, և որ 717 թուին 20.000-ի չափ խաղաղներ հասել են մինչև Աղբրէյշանի խոր-

քերը Այս պատահել է Հաշիմ-բէն-Աբդուլմելիք խալիֆի իշխանութեան միջոցին. մինչդեռ յայտնի է, որ Հարուն-էլ-Ռաշիդի խալիֆութեան ժամանակ խաղաղները նորից են յարձակուել Շիրուան ու 10.000 հոգի գերի են տարել իրանց հետ:

Կովկասեան շղթայից հիւսիս ապրող Ուրալ-Ալթայցիները և սահմանակից իրանական ժողովուրդների մէջ տեղի ունեցող այդ յաճախակի ու կենդանի շփումը աչքի առաջ ունենալով՝ տնտեսութեան թոյլատրելի է ենթադրելը, որ հստ-հատ թուրք ցեղեր թափառում էին արդէն անելի վաղ ժամանակներից Շիրվանի, Մուղանի ու Դարաբաղի հարթակներում, մի խօսքով՝ Կուրի ու Արաքսի երկայնքին փռուած տափարակում: Հետեւեալ քրիստոնէական առաջին դարերում կային արդէն թուրք տարրեր Արեւելեան Կովկասում, մասամբ դժւոյ, մասամբ էլ խառնուած տեղացի արեւական արեան. և սրանք են որ ծագում են տուել ու էապէս նպաստել են այսօրուայ Կովկասը ընդորոշող ազգաբնակչան խառնաշփոթութեանը:

Գուցէ այդ թուրք տարրերից են առաջ եկել Կումիւքները. մինչ ուրիշները, ինչպէս օրինակ, երբեմնի Շիրվանի խանութեան թուրք բնակիչները կարելի է որ առաջացած լինեն իրանցիների կամ հարեան Կովկասեան ժողովուրդների հետ նրանց ունեցած խառնուրդից: Մակայն այսօրուայ Անդրկովկասի թուրք բնակչութեան ստուար մասը անկասկած հարաւից է եկել դէպի հիւսիս. այսինքն նրանք ներկայացնում են Ազրբեյջանից ու Կասպից ծովի հարաւային ափերից ելած այն թուրք հրոսակների բեկորները, որոնց դէպի Կովկաս են նետել քաղաքական դէպքերը Սելջուկների երեւալուց սկսած մինչեւ Ռուսաստանի ամբողջական տիրապետութիւնը, ուրեմն մինչեւ 18-րդ դարու վերջերը:

Սրան իբրեւ ապացոյց կարելի է բերել և Անդրկովկասի թուրքերի լեզուն, որ իր էական կողմերով սերտ կապուած է Ազրբեյջանում խօսուող բարբառին, իսկ Կումիւքերէնից ջուլուտ է թէ բերականական թէ բառարանական առանձնայատկութիւններով, ինչքան որ կարելի է եզրակացնել Կլապրոթի բերած բառերի ժողովածուից: Լեզուի այդ նոյնութիւնը չի կարելի միմիայն իրանական-միւսլիման դարաւոր ազդեցութեանը վերագրել. դրա գլխաւոր պատճառը ազգաբնակչան ընդհանուր ծագումն է: Եթէ այդպէս չլինէր, պէտք էր որ այդ կուլտուրական ազդեցութիւնը կումիւքների վրայ էլ նկատէինք, որը սակայն չի երևում. դեռ ընդհակառակը, սրանց լեզուն շատ կէտերում հակում ունի դէպի նոդայ-թաթարների բարբառը, որոնք ապրում են Կուրանի միջին հովտում:

Մի երկրորդ ապացոյց էլ կարող ենք հանել մի քանի ցեղերի ու տոհմերի անուան նոյնութիւնից, որոնք մի կողմից ապրում են Անդրկովկասում Ռուս տիրապետութեան տակ, միւս կողմից էլ իրանում Պարսից Շահին իրրև հարկատու։ Այսպէս օրինակ, Շահսեւէններ կան Բաքուի շուրջը, ինչպէս և Թեհրանի, Փարսի ու Շամսէհի գաւառներում. մենք կաջարկները ենք հանդիպում Շեմախի շրջանի Կաշար գիւղում, ինչպէս և Մազանդարանում, որ իսկապէս նրանց գլխաւոր կենտրոնն է. Լէկ ցեղը ապրում է Կուրի հովտի Գէօք-չայի շրջանակում, ինչպէս և Պարսկաստանի շատ մասերում. վերջապէս Նենկերլունները, որոնք կենում են Գէօք-չայի ու Կուրանի շրջաններում, ինչպէս և Թեհրանի գաւառում. և այլն։

Իբրև մի երրորդ ապացոյց էլ կարող ենք մէջ բերել անդրկովկասեան թուրքերի ֆիզիկական յատկանիշները, որոնց դիմագծերի և ընդհանուր կազմի վրայ իրանական արեան կնիքը շատ աւելի որոշ է քան կովիւքների վրայ. մինչդեռ կովկասեան մեծ շղթայի հիւսիսային էջերին ապրող թուրքերի մէջ շատ աւելի յաճախ են երևում Ուրալ-Ալթայեան իսկական տիպի հետքերը։

Ուրեմն, Զէյգլիցի նման, մենք էլ այն կարծիքի ենք, որ Անդրկովկասի արդի թուրք աղագրնակութիւնը եկած է հաւրակց Սելջուկների, Մոնղոլների, Կարա-քոյունլուների, Աքքոյունլուների, Սեֆիդների ու Կաշարների արշաւների ժամանակ։ Ստուար մեծամասնութեամբ թուրքմեններ են դրանք իրենց ծագումով, միայն ոչ բացառաբար այն թուրքմեններից, որոնց մենք հանդիպում ենք այսօր կասպիականի արեւելեան ափերին, այլ այդ ժողովուրդի այն հատուածները, որոնք Սելջուկների, Զինգիդների ու Սիֆիդների ժամանակ Աղըրէյջանից եկել են մտել Կուրի ու Արաքսի հովիտները ու մնացել այդտեղ։

2. Թուրքերի իրան գալը

Վճռելը դժուար է, թէ Էբր և ինչպէս են դուրս մղել թուրքերը Աղըրէյջանից հին իրանական տարրերին։ Շալիզը կարծում է, թէ այդ գաղթը աւելի նոր ժամանակներում է տեղի ունեցել, քանի որ դեռ միջին դարերում Աղըրէյջանում խօսելիս են եղել, ըստ Եակովտի, մի առանձին իրանական բարբառ, աղըրի կոչուած։

Ամեն տարակոյսից դուրս է, որ մի քանի թուրք թափառական հրոսակներ երեացել են 9-րդ դարում արեւմտեան Ասիայում, երբ Բաղդադի խալիֆները սովորութիւն դարձրին

Թուրք թիկնապահներ պահելը, որը յետագայում աճելով ու մեծանալով վերածուեց Թուրք բանակի, Բայց Թուրքական մեծ ժառանգների գալը պէտք է որ Սելջուկների շարժումովը սկսուած լինի:

Մինչդեռ Մահմուդ Սերեկտեկինը Խորասան էր բերում Սելջուկ տոհմին մօտ 100 000 Թուրք, նոյն միջոցին Քէօք-ալպ -խանից ծագուած առած մի ուրիշ Թուրք ցեղ, անասունով ու ինչքով հարուստ, գալիս է Հայաստան ու նստում գլխաւորապէս Ախլատի (Խլատ) շուրջը: 1219-ին, այսինքն իրենց գալուց 170 տարի յետոյ, այդ ցեղի մի մասը Մոնղոլներից ճնշուած գնում է աւելի արեւմուտք, ինչպէս պատմում է Նեշրի, մինչ միւս մասը մնում է Հայաստանի սահմաններում, այսինքն այսօրուայ Աղբթէյշանում: Սրանց միանում են յետոյ Մոնղոլների հետ ներս թափուող ուրիշ Թուրք ցեղեր, և այսպիսով կազմում են իսկապէս ասած Թուրք տարրի այն կորիզը, որի շուրջը խմբւում են հետզհետէ նստակեաց կեանքի մի բիչ աւելի հակում ունեցող պատերազմիկ Թափառական ցեղերը, և բիչ-բիչ գրաւում Մոնղոլների բշած ու վարած իրանական տարրերի տեղը:

Ինքնին հասկանալի է, որ հիւսիս-արեւմտեան Իրանի Թուրքացումը աւելի թափ առաւ, երբ Մոնղոլները իրենց աթուղ գրին Թաւրիզում. որովհետեւ, ինչպէս երևում է Իլխանէների պատմութիւնից, պալատական լեզուն Թուրքերէն էր դեռ մինչև Ղազանի զահ բարձրանալը. մեզ հասած պատուի ու աշխարհագրական անուններ կան, որ այդ ժամանակն են ծագումն առել: Այսպէս օրինակ, յիշեմ արդի Շիրվանում գրտնուող Խալիսէ կոչուած որսի տեղը, որի անունը Ղազան փոխում է ու դնում Քուշ-կօյուն, որովհետեւ այնտեղ վարազ էր որսացել. վարազին Թուրքերէն քուշ-քօյուն են ասում:

13-րդ դարու վերջերին հիւսիս-արեւմտեան Իրանում Թուրք տարրը ըստ երևոյթին գերիշխող էր արդէն: Թէև Թիմուրի արշաւանքները այդ տարրի ստուարացմանը մինոր դրդում չեն տուած, բայց Ակ-կօյունլու և Կարա-կօյունլու կոչուող Թուրքմեն ցեղերի մէջ եղած անվերջ կռիւները շատ են նպաստած, որ Թուրքմենների մի վերջին ստուար զանգուած Իրանի հիւսիսային եզերքի հարթութիւններից դէպի Աղբթէյշան ու Անդրկովկաս փոխադրուի:

Մասնակի մանր հոսանքներ դեռ 18-րդ դարումն էլ են տեղի ունեցել. բայց մենք սխալուած չենք լինի, եթէ ընդունենք, որ գեռ Ուղուն-Հասանի ժամանակ, հետեւաբար 15-րդ

դարու կէսին, Իրանի թուրք տարրը այնպէս էր դասաւորուած, ինչպէս մենք այսօր տեսնում ենք:

3. Նրանց ընտելութեան գլխաւոր կենտրոնները

Նախ կը խօսենք անդրկովկասեան թուրքերի մասին, վերջն էլ Իրանի:

Կովկասեան մեծ շղթայի հարաւային էջերից սկսած մինչև Արաքս գետը, այսինքն մինչև Իրանի իսկական սահմանը, թուրքերը ամենից շատ գտնուում են Բաքուի նահանգում, որի մէջն է մտնում նաև Շիրուանի երբեմնի խանութիւնը: Այդ նահանգում, ըստ Զէյդլիցի, նրանց թիւն է 304, 049 հոգի, ուրեմն ամբողջ ընտելութեան 57,^{1/45} տոկոսը: Այդտեղ նրանք տարածուած են Կուր ու Արաքսի հովիտով մինչև Վրաշ-Հայը— Լենքորանի շրջանում: Յետոյ նրանք ապրում են Կուրայի շրջանակում, Սամուր ու Աթա-Հայի մէջը փոռուող հարթութեան վրա: Այլ և Երևանի նահանգում Արաքսի վերին հոսանքով մինչև Սիւրմալի: Բայց ամենից խիտը Շամախիի, Շուշիի ու Նուխու մէջ ընկած հարթ տարածութիւնն է, ինչպէս որ ասացինք: Դա էլ բացատրուում է նրանով, որ այդտեղ հին Շիրուանի խանութիւնը անդրկովկասեան թուրք կեանքի գլխաւոր հնոցն էր ներկայացնում դեռ Մոնղոլների ժամանակից սկսած, բայց մանաւանդ Աք ու Կարա-կոյունլուների մէջ եղած կռիւների միջոցին. այնպէս որ ամենից աւելի էր ենթակայ տափաստաններից իջնող նոր եկուորների հոսանքին: Բացի դրանից, Անդր-կովկասի թուրք տարրը ամենից առաջ այստեղ է բուն դրել, որը և պատմականօրէն կարելի է ապացուցանել, եթէ աչքի առաջ ունենանք Խանիկովի հետազօտութիւնները միւսիլման Կովկասի հնութիւնների մասին: Նրա ուսումնասիրութեամբ Շիրուանի չորս կողմն են գտնուում միւսիլման կուլտուրայի հնագոյն յիշատակարանները, քան թէ, օրինակ, Երևանի շուրջը. որից և կարելի է եզրակացութիւն հանել զանազան միւսիլման թուրք մասերի երևան գալու մասին:

Իսկ ինչ վերաբերում է իսկական Իրանի թուրքերը ապրում են հետևեալ վայրերում.

1) Ազրըբէյջանում, Արաքսից սկսած դէպի հարաւ Բիւր-դիստանի սահմանով և Ուրմիայի վրայով մինչև Կերմանշահ: Թուրքերի ամենախիտ մասն է սա, իբրև շարունակութիւն անդրկովկասեան թուրք տարրի, որից միայն քաղաքականապէս է բաժանուած. սա կազմում է Իրանի թուրքերի գլխաւոր նիստը:

2) Շամսէհ, այսինքն Ազըրբէյջանի ու Թեհրանի մէջ ընկած տարածութիւնը, մասնաւորապէս Զինջանի շուրջը:

3) Թեհրանի նահանգում, գլխաւորապէս Դըմաւէնդի հովիտներում, այլ և մայրաքաղաքի անմիջական շրջակայքը:

4) Կերման, Ֆարսի սահմանակից մասներում:

5) Իրաք, Համադանի մէջն ու շուրջը:

6) Փարս, ուր նրանք նայելով տարուայ եղանակին մերթ մինչև Իսպահանի սահմաններն են բարձրանում, մերթ իջնում են մինչև ծովի եզերքը:

7) Խորասան, ամենից շատ ընակւում են Նիշապուրի, Գուշանի, Զուլէինի ու Գեւատի-Նադիրի շրջակայքը:

Գալով իրանական թուրքերի գանգային կազմութեանը, կամ աւելի ճիշտ ասած ցեղային բաժանումին, շատ են խախուտ մեր ձեռքը եղած փաստերը, և դժուար է եղբակացութիւն հանելը, թէ ի՞նչ կապ ունին դրանք Միջին Ասիայի ազգակից թուրքերի հետ: Այսպէս՝ եթէ իրանեան թուրք ցեղերի անունները համեմատելու լինինք նրանց ամենից աւելի մօտիկ ազգակից թուրքմենների հետ, դուրս է գալիս, որ այդ անուններին մի քանիսը իրօք պատմական արժէք ունին, եթէ պատահում են արդէն Մոնղոլների ժամանակ: Օրինակի համար Ֆարսում ապրող Կաշկայի ցեղը, որի մասին յայտնի է թէ դեռ Իլխանէների տիրապետութեան ժամանակ են եկած Պարսկաստանի հարաւը:

Անուններ էլ կան, որոնք պարզ ցոյց են տալիս թէ իրանց ծագում տուող մայր ցեղը դեռ գոյութիւն ունի թուրքմանների մէջ՝ օրինակ.

Իրանեան թուրքեր

Թուրքմաններ

Խօջա-ալի	Ղարաբաղում	Խօջա-ալի	Սարիքների մօտ
Բէգդիլի	Ղարաբաղում	Բէգդիլի	Թէկէկէների մօտ
Կենգէր	Անդրկովկասում	Կէօնգէօր	Թէկէկէների մօտ
Կարա	Քիրմանում	Կարա	Անդխօի շուրջը
Բանաթ	Նիշապուրի շուրջը	Բանաթ	Սալօրների մօտ և այլն

Սրանից որոշակի երևում է, որ յիշուած իրանեան թուրք ցեղերը իրենց անուանակից թուրքմանների հետ ազգական են կամ նոյնիսկ ուղիղ գծով նրանցից են առաջ եկած:

Իրանեան ցեղերի մի երրորդ խումբ էլ կայ, որոնց անունը թէև թուրքման ծագում ունի, բայց այդ անունը կրող ազգակից ժողովուրդը այլ ևս չկայ այսօր Միջին Ասիայի տա-

փաստաններում: Այսպէս, օրինակ, Առաջադրանքը Ուրմիայի, Քիլատի-Նադիրի շրջակայքում, որոնք արդէն բոլորովին շինտ են դարձած, այսինքն վերածուել են պարսիկի. կամ Կաշարները, որ առաջ Աստրաբատի սահմանակից տափարակներում էին կենում, իսկ այժմ ցրիւ ապրում են Իրանում:

Վերջապէս ցեղական անուններ էլ կան, որ ստացել են թուրքերը անապատներից իջնելուց ու Պարսից թագաւորի ծառայութեանը մտնելուց յետոյ, դրա համար էլ աւելի նոր են. այսպէս, օրինակ, Շահսէնները, որ Շահը սիրող է նշանակում, ուրիշ խօսքով կուսակից Պարսից թագաւորին:

4. Իրանի գլխավոր թուրք ցեղերը

Մասամբ մեր անձնական փորձի, մասամբ էլ Շէյլի (J. Sheil) տուած տեղեկութիւնների հիման վրայ տալիս ենք թուրք ցեղական անունների հետեւեալ ցանկը:

Կաշար, Աֆշար, Շահսէն, Բէգդիլի, Կարա-փափախ, Կաշկայի, Ալլահ-վերդի, Ջանքէզլու, Ուղունլու, Աբուլ-հասանլու, Կենդերու, Ջերրուզ, Կելլէկուհ, Շեկակի, Կուրդքէզլու, Բեհարլու, Իհանլու, Կիլիշ և Ջելաիր:

Նախորդ դարերում, մանաւանդ Սեֆիդների ժամանակ, ըստ երևութին, կլանային կապերը դեռ չէին կորուսել իրանց նշանակութիւնը, և ինչպէս երևում է պատմական դէպքերի ընթացքից, ուրոյն ցեղերը ապրում էին միասին խիտ զանգուածներով ու որոշ տեղերում: Այսօր ոչ առաջինը կարելի է պնդել, ոչ էլ երկրորդը: Նախ և առաջ՝ միայն ուժեղ ու նշանաւոր ցեղերն են, որ մի մասնաւոր նշանակութիւն են տալիս իրանց ցեղական ծագումին, մինչդեռ փոքրիկ հատուածները, ինչպէս ինքս եմ ստուգել, իրանց ծագման վերաբերմամբ բոլորովին մութի մէջ են:

Կռիւների, կուսակցական խառնակութիւնների ու արկածախնդրութեան շնորհիւ երբեմնի ուժեղ ցեղերը մանրուել են ու ցրուել Պարսկաստանի ընդարձակ տարածութեան վրայ մինչև Քիւրտիստանի լեռները, և Կովկասի գլխաւոր շղթայից սկսած մինչև Պարսից ծոցը. այնպէս որ մենք այսօր նոյն ցեղին պատկանող մասերի ենք հանդիպում Կովկասում, Համադանում, Քիրմանում ու Պորսսանում:

Բացառութիւն են կազմում միայն հետեւեալ մեծ ցեղերը, որոնք աւելի նւազ պառակտուած, տեղ-տեղ պահել են դեռ իրանց հին նստավայրերը:

ա. Կաշարները. այսինքն Պարսկաստանի արդի իշխող տունը: Սրանք իրանց ծագումը առնում են Սեբտակ Նօեանից,

որը իբրև Աթաբէգ Պարսկաստանում մեծ դերքի էր հասել և որի որդին՝ Կաջարը ամբողջ ցեղին տուել է իր անունը (Կաջար աւելի ճիշտը Կաջար նշանակում է փախստական)։ Աբուսալիդի ժամանակները, սրանք ուրիշ թուրք ցեղերի հետ միասին ապրում էին Սիրիայի սահմաններում, իսկ երբ Թիմուր 1400 թուին Դամասկոս էր արշաւում, ստիպեց նրանց որ ետ դառնան իրանց հին հայրենիքը, այսինքն թուրքստան։ Բայց նրանք ճամբին կանգ առին ու մնացին Ազըրբէյջանում, Գինջէյում ու Իրաքում։ Երբ Թիմուրեանների տիրապետութիւնը ընկաւ, իշխանութիւնը 1466-ին անցաւ Աբ-քոյունլուների ցեղապետ Հասան-բէգի ձեռք, որ Կաջարների հետ ազգական էր. այդպիսով և Կաջարները հասան իշխանութեան իրանց տեղում։ Եւ մինչև Շահ-Աբբաս մեծի ժամանակը այդտեղ էլ մնացին, երբ այս միապետը, ժառանգ Անդրկովկասում նրանց ունեցած խիստ մեծ ազդեցութեանը նախանձելով, ժառանգ էլ աւագակարարոյ թուրքմանների դէմ նրանց իբրև պատուար ծառայեցնել ուղեւով՝ բռնի ուղարկեց նրանց Գէօրգէն լճի ափերը՝ Աստրաքից հիւսիս ու Քուշանի շրջակայքը։ Այսպիսով Աբբաս ապահովեց իրեն սրանց ուժից, միւս կողմից էլ թուրքոյանների ու ֆոգրէզների դէմ մի պատնէշ քաշեց։ Պարսկաստանի արդի արքայատունը իր ծագումը առնում է Աստրաքից վեր ապրող այդ Կաջարներից։

Բ. Շահսեէները. այսինքն Շահը սիրողներ, շահի կուսակիցներ։ Մի անուն, որ առաջին Սեֆիդի՝ Շահ Իսմայիլի ժամանակից է գալիս ու ծագում է այն պառակտումից, որ այդ միջոցին տիրում էր այդ կողմերի թուրքերի մէջ. շիի դաւանանքին ու Աբ-քոյունլուների կուսակից թուրքերը Շահսեէն մակդիրն առին իրանց վրայ։ Դրա համար էլ բոլորովին ճիշտ է Նանիկովի պնդումը, թէ սխալ է այդ ցեղը իբրև մի առանձին ազգազրական միութիւն նկատելը, քանի որ Շահսեէները Ազըրբէյջանի ու Անդրկովկասի զանազան ցեղերից են առաջ եկել, ու դրանց ցեղային շրջանակի մէջ մտնելը համեմատաբար նոր ժամանակի բան է։

Շահսեէներին մեծ մասը ամառը ապրում է Էրզրէիլի մօտ, Սաւալանի էջերին, իսկ ձմեռը 3490 վրանով (մօտ 17.450 հոգի) Մուղանի դաշտում։ Բացի դրանից, մի բաւական նշանաւոր հատուած էլ կայ Իրանում, որ ապրում է Քամի, Թեհրանի, Նագուինի ու Ջինջանի մէջտեղում, Շէյլի առելով մօտ 9000 վրան։ Այս վերջիններս ըստ երևոյթին Իրանի ամենից աւելի անհանգիստ թուրք տարրն են ներկայացնում ու մեծ մասով

Թափառական կեանք են վարում, կամ կէս, կամ բոլորովին:

Գ. Կաշքախներն ու Ալլահվերդիները, որոնք ապրում են հարաւային Պարսկաստանում, այսինքն Ֆարսի նահանգում, չնչին բացառութեամբ Թափառական են: Այս ցեղի հիմնական տոհմը Փարս է, գաղթել է Աթաբէգի ժամանակները: Քաշքաի հին-թուրք բառ է ու նշանակում է «ճակտին սպիտակ բիծ ունեցող ձի», որը իբրև գլանային անուն մինչև օրս էլ հանդիպում ենք թուրքոմանների մէջ: Վերջերս անգլիացի ճանապարհորդ Օլիւիէ Ս. Չօնը այցելել է այդ ցեղի ձմեռուան բնակավայրը Ֆարաշէնդ գիւղից ոչ հեռու 3000 ոտնաչափ բարձր մի դաշտակի վրա: Շատ եմ ցաւում, որ Ս. Չօնի աղգագրական նկատողութիւնները ձեռքս չեն հասած:

Դ. Կարա-քոյունլու, որոնք կենում են Խօյի շրջակայքում, հաւանօրէն սերունդ են այն համաւաւոր թուրքոման ցեղի, որի դէմ հզօր Թիմուրը իր ամբողջ կեանքում արեան վայրի վրէժխնդրութեամբ վառուած, ոչնչացնելու կռիւ էր մղում. մի ցեղ, որից սակայն մնացել է դեռ մի բաւական մեծ թիւ: Այս մարդիկը, թէև ոչ իրանց լեզուի ու տիպի, բայց իրանց վարք ու բարքի մէջ, զարմանալու աստիճան, ամենից շատ են պահել իրանց երեւմանի թուրքոման լինելու հետքերը:

H. Vambery

(Վերջը յաջորդ համարում)